<table>
<tr><th>TERMS AND CONDITIONS</th><th>ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐ</th></tr>
<tr><td></td><td></td></tr>
<tr><td>Campaign name: New Year Campaign</td><td>Գովազդային արշավի անունը․ Ամանոր Արշավ</td></tr>
<tr><td></td><td></td></tr>
<tr><td>Visa is implementing a campaign for Visa cardholders in Armenia, according to which any Visa cardholder who makes a purchase of 5,000 AMD and more and pays via its Visa Card will automatically participate in the raffle organized at the end of the campaign period and have a chance to win one of the 50 prizes mentioned below (hereinafter: “Campaign”) in accordance with the conditions set forth in this document (hereinafter referred to as the “Terms and Conditions”). By participating in the lottery, you have a chance to win one the following Prizes:
<table>
<tr><td>Prizes</td><td>Quantity</td></tr>
<tr><td>Super prize Car Volvo</td><td>1</td></tr>
<tr><td>El Scooter</td><td>5</td></tr>
<tr><td>Iphone 13 pro</td><td>5</td></tr>
<tr><td>Samsung Crystal UE55AU7500UXRU</td><td>5</td></tr>
<tr><td>Apple Watch Series 7 (45mm)</td><td>10</td></tr>
<tr><td>Mac Book Air 13 MGN63 M1 256GB</td><td>2</td></tr>
<tr><td>Bosch Kitchen Set</td><td>5</td></tr>
<tr><td>Playstation 5</td><td>2</td></tr>
<tr><td>Apple Air pods Pro 3</td><td>10</td></tr>
<tr><td>Canon Photo Set</td><td>5</td></tr>
<tr><td>Total</td><td>50</td></tr>
</table></td>
<td>Վիզան Հայաստանում Վիզա քարտապանների համար իրականացնում են Արշավ, համաձայն որի յուրաքանչյուր Վիզա քարտապան, ով 5,000 ՀՀ դրամ և ավելի արժողությամբ գնում է կատարում վճարելով իր Վիզա քարտով, ավտոմատ կերպով մասնակցում է Արշավի վերջում կազմարեպվող վիճակախաղին և կարող է շահել ստորև նշված 50 նվերներից մեկը (այսուհետ՝ «Արշավ») սույն փաստաթղթով սահմանված պայմաններին համաձայն (այսուհետ՝ «Պայմաններ և դրույթներ»):<br>Վիճակախաղին մասնակցելով կարող եք շահել հետևյալ Շահումներից մեկը՝
<table>
<tr><td>Շահումներ</td><td>Քանակ</td></tr>
<tr><td>Volvo ավտոմեքենա</td><td>1</td></tr>
<tr><td>Էլեկտրական սկուտեր</td><td>5</td></tr>
<tr><td>Iphone 13 pro</td><td>5</td></tr>
<tr><td>Samsung Crystal UE55AU7500UXRU</td><td>5</td></tr>
<tr><td>Apple Watch Series 7 (45մմ)</td><td>10</td></tr>
<tr><td>Mac Book Air 13 MGN63 M1 256GB</td><td>2</td></tr>
<tr><td>Bosch Kitchen Set</td><td>5</td></tr>
<tr><td>Playstation 5</td><td>2</td></tr>
<tr><td>Apple Air pods Pro 3</td><td>10</td></tr>
<tr><td>Canon Photo Set</td><td>5</td></tr>
<tr><td>Ընդամենը</td><td>50</td></tr>
</table></td></tr>
<tr><td>By agreeing to these Terms and Conditions, you declare that you have read the terms on participation in the lottery and winning the prizes before making any purchases and accept all the conditions listed below.</td><td>Սույն Պայմաններին և դրույթներին համաձայնելով Դուք հայտարարում եք, որ ծանոթացել եք վիճակախաղին մասնակցելու և շահումներ շահելու պայմաններին նախքան գնումներ կատարելը, ինչպես նաև ընդունում եք ստորև ներկայացվող բոլոր պայմանները:</td></tr>
<tr><td>We reserve the right to revise these Terms and Conditions from time to time. We ask you to periodically review the terms and conditions to familiarize yourself with the changes. We are</td><td>Մենք իրավունք ենք վերապահում ժամանակ առ ժամանակ վերանայել սույն Պայմաններն ու դրույթները: Խնդրում ենք պարբերաբար վերանայել Պայմաններն ու դրույթները՝</td></tr>
</table>

| | |
|---|---|
| not responsible for any expected changes in the terms of the preliminary notification, and you agree that you participate in the campaign solely at your own risk. | փոփոխությունների հետ ծանոթանալու նպատակով: Մենք որևէ պարտավորություն չենք կրում Ձեզ նախապես ծանուցելու Պայմաններում և դրույթներում ակնկալվող փոփոխությունների մասին, իսկ Դուք համաձայնում եք, որ Արշավին մասնակցում եք բացառապես սեփական ռիսկով: |
| | |
| 1. <u>Description of the Campaign, conditions and eligibility</u> | 1. <u>Արշավի նկարագրությունը, պայմանները և համապատասխանությունը</u> |
| If you are a Visa cardholder, you can win one of the 50 prizes (hereinafter: "Prizes") if you satisfy the following cumulative conditions: | Եթե Դուք Վիզա քարտապան եք, Դուք կարող եք շահել 50 նվերներից մեկը (այսուհետ «Շահումներ»), եթե Դուք միաժամանակ բավարարում եք հետևյալ պայմաններին՝ |
| a. You make a purchase (either via POS or E-comm) of 5,000 AMD at a time) with your Visa card during the Campaign dates; and | ա․ Դուք միանվագ 5,000 ՀՀ դրամ (POS տերմինալի կամ էլեկտրոնային առևտրի միջոցով) և ավել արժողությամբ գնում եք կատարում Ձեր Վիզա քարտի միջոցով Արշավի անցկացման օրերին, և |
| b. The unique identification number virtually assigned to your respective transaction by the respective bank was randomly selected as the winner and, by answering a phone call from a representative of the bank, you approve to become the winner. | բ. Բանկի կողմից Ձեր գործարքին վիրտուալ եղանակով նշանակված հատուկ նույնականացման համարը պատահականության սկզբունքով ընտրվել է որպես հաղթող և պատասխանելով բանկի ներկայացուցչի հեռախոսազանգին Դուք հաստատում եք Ձեր հաղթող ճանաչվելը: |
| | |
| Only Visa cardholders whose cards are issued in the Republic of Armenia by Armenian banks are eligible to participate in the Campaign. | Միայն այն Վիզա քարտապաններն իրավունք ունեն մասնակցել արշավին, որոնց քարտերը թողարկվել են Հայաստանի Հանրապետությունում ՝ Հայկական բանկերի կողմից: |
| All types of Visa cards can participate in the Campaign, except for Visa Business, Visa Prepaid cards. | Արշավին կարող են մասնակցել բոլոր տեսակի Վիզա քարտերը, բացառությամբ Visa Business և Visa կանխավճարային քարտերի: |
| Only 3 transactions from the same POS terminal for the same day can be registered as a transaction participating in the raffle, in order to exclude the artificial division into 5 000 AMD transactions. | Նույն POS-տերմինալից նույն օրվա ընթացքում միայն 3 գործառնություն կարող է գրանցվել որպես խաղարկությանը մասնակցող գործառնություն՝ գործառնությունների |

| | |
|---|---|
| | արհեստական բաժանումը 5000 ՀՀ դրամի բացառելու նպատակով: |
| In the end of the Campaign dates, the Bank servicing the card summarizes the results of transactions that meet the conditions, and each transaction is provided with a unique identification number. | Արշավի ավարտին քարտը սպասարկող բանկը ամփոփում է պայմանները բավարարող գործառնությունները և յուրաքանչյուր գործառնությանը տրվում է հատուկ նույնականացման համար: |
| Banks, in accordance with these rules, assign an identification code for every 5 000 AMD and above of the transaction made by the raffle participant and send it to the organizer in an Excel file. The organizer places the received data in a single Excel file and prints the tickets with an identification code provided by banks,<br><br>The lottery participant can use any number of Visa brand cards. A transaction made from an additional card account will be considered equal to the transaction made from the main card account.<br>The ticket is not given directly to the raffle participant. The raffle participant can understand the number of tickets on the account with a bank statement of a specific card: for every 5 000 AMD and above the transaction is equal to 1 (one) ticket.<br>One cardholder can win one Prize at a time, so once one of the cardholders has won, his/her other tickets will be removed from the raffle. | Բանկերը, սույն կանոններին համապատասխան, տրամադրում են նույնականացման կոդ յուրաքանչյուր 5000 ՀՀ դրամ և ավելի գործառնություններին և ուղարկում դրանք կազմակերպչին Excel փաստաթղթի տեսքով: Կազմակերպիչը ստացված տվյալները հավաքում է Excel-ի միասնական փաստաթղթում եւ տպում է բանկերի կողմից տրամադրված նույնականացման կոդերով տոմսեր:<br><br>Վիճակախաղի մասնակիցը կարող է օգտագործել Visa ֆիրմային քարտերի ցանկացած քանակ: Հավելյալ քարտային հաշվից կատարված գործարքը կհամարվի հիմնական քարտային հաշվից կատարվածին հավասար գործարք:<br>Տոմսը չի տրվում անմիջապես խաղարկության մասնակցին, նա կարող է հասկանալ տոմսերի համարը կոնկրետ քարտից բանկային քաղվածքի միջոցով (յուրաքանչյուր 5000 ՀՀ դրամի և ավելի բարձր գործառնություն հավասար է 1 (մեկ) տոմսի):<br>Մեկ քարտապանը կարող է հաղթել միայն մեկ Շահում, ուստի, երբ քարտապանը հաղթում է, նրա մյուս համարները հեռացվում են վիճակախաղից: |
| The identification numbers are provided by the bank to the organizer (host) without any personal details of the cardholders until January 17th of 2022. The raffle will take place on 20th of 2022. | Նույնականացնող համարները Բանկի կողմից, առանց քարտապանների անձնական տվյալների, տրամադրվում են Կազմակերպչին (Վարողին) մինչև 2022թ. հունվարի 17-ը: Վիճակախաղը տեղի կունենա 2022թ. հունվարի 20-ին: |
| The draw results are summarized during a live broadcast, which will also be translated in social media platforms, where the winning | Վիճակախաղի արդյունքները ամփոփվում են ուղիղ հեռարձակմամբ, որը նաև կհեռարձակվի սոցիակալան մեդիայի հարթակներում, որտեղ |

| | |
|---|---|
| identification numbers are drawn by Committe and the relevant employees contact with cardholders through a phone call. The Prizes will be announced from the least expensive to the most expensive order. | ստեղծված հանձնաժողովի կողից դուրս են բերվում հաղթող նույնականացման համարները և համապատասխան աշխատակիցները հեռախոսազանգի միջոցով կապ են հաստատում քարտապանների հետ: Շահումները կհայտարարվեն ամենացածր արժեքից մինչև ամենաբարձր արժեքի հերթականությամբ: |
| The winning identification number are considered as tentative winners unless by answering the phone call during the live broadcast of the draw You consent to becoming winner. If you consent on being recognized as a winner Your name and surname will be announced during the broadcast.<br>If at the end of the broadcast there will be a few tickets that could not be reached, at the end of the broadcast the Organizer will take reserve tickets. Bank representative will continue to contact the tentative winners during the whole day. If the cardholders will not answer or will not agree to be announced as the winner, bank representatives will contact to the reserve ticket owners 3 times the next day and if reaching them and receiving the approval, Visa will publish full list of the winner to the Visa official web page. | Հաղթող նույնականացման համարներ համարվում են նախնական հաղթողներ, քանի դեռ ուղիղ հեռարձակման ընթացքում Դուք պատասխանելով Բանկի ներկայացուցչի հեռախոսազանգին չեք համաձայնել ճանաչվել հաղթող: Եթե դուք համաձայնեք հաղթող ճանաչվել, ձեր անունը եւ ազգանունը կհայտարարվի ուղիղ հեռարձակման ժամանակ:<br>Եթե հեռարձակման վերջում լինեն մի քանի համարներ, որոնց հետ չի հաջողվել կապ հաստատել, հեռարձակման վերջում Կազմակերպիչը դուրս կբերի պահեստային տոմսեր: Բանկի ներկայացուցիչը ողջ օրվա ընթացքում կշարունակի կապ հաստատել նախնական հաղթողների հետ: Եթե քարտապանները չպատասխանեն կամ չհամաձայնեն հաղթող ճանաչվել, բանկի ներկայացուցիչները հաջորդ օրը 3 անգամ կկապվեն պահեստային համարների քարտապանների հետ, եւ նրանց հետ կապ հաստատելու և համաձայնությունը ստանալու պարագայում, Visa-ն հաղթողների ամբողջական ցանկը կհրապարակի Visa-ի պաշտոնական կայքէջում: |
| After the raffle, the non-raffled tickets will be withdrawn and disposed of, while the winning tickets will be sealed in an envelope in the presence of the Committee and will be archived in the raffle organizer's archive together with the raffle protocol.<br>Audio-video recording of the raffle process in the presence of the Committee is provided by the raffle organizer. | Վիճակախաղից հետո չհաղթած համարները դուրս կբերվեն և կոչնչացվեն, իսկ հաղթող համարները Հանձնաժողովի ներկայությամբ կկնքվեն ծրարի մեջ և կարխիվացվեն Կազմակերպչի արխիվում վիճակախաղի արձանագրության հետ:<br>Վիճակախաղի տեսաձայնագրությունը տրվում է Կազմակերպչի կողմից Հանձանժողովի ներկայությամբ: |

| | |
|---|---|
| Information about the winners (name and first letter of the last name) will be posted on the social network pages within 2 (two) days.<br>Facebook page: Visa Armenia | Հաղթողների վերաբերյալ տեղեկատվությունը (անուն և ազգանվան առաջին տառը) կիրապարակվի սոցիալական մեդիայի էջերում 2 (երկու) օրվա ընթացքում: |
| 2. **<u>Terms of the Campaign</u>** | 2. **<u>Արշավի ժամկետները</u>** |
| The Campaign is held from 00:00:00, December 15, 2021, to 23:59:59 January 10, 2022, local time (hereinafter: “Campaign dates”). | Արշավն իրականացվում է 2021 թվականի դեկտեմբերի 15-ից ժամը 00:00:00 մինչև 2022 թվականի հունվարի 10-ը ժամը 23:59:59(այսուհետ՝ «Արշավի օրեր»): |
| The Campaign dates are not subject to change. | Արշավի անցկացման օրերը փոփոխության ենթակա չեն: |
| The Campaign will end at 23:59:59 on January 10, 2022. | Արշավը կավարտվի 2022 թվականի հունվարի 10-ի երեկոյան ժամը 23:59:59-ին: |
| 3. **<u>The handover of Prizes</u>** | 3. **<u>Շահումների հանձնումը</u>** |
| To receive a Prize, you will be asked to provide with your passport and social security number or ID card, residency address and telephone number. **Your first name and last name will be publicly announced as a winner of the Prize.** Other personal information will be used for tax reporting and accounting purposes for a term of no less than 5 year (longer if required by the law). | Շահումը ստանալու համար Ձեզանից կպահանջվի ներկայացնել Ձեր անձնագիրը և սոցիալական քարտի համարը կամ նույնականացման քարտը, բնակության հասցեն և հեռախոսահամարը: **Ձեր անունը և ազգանունը կիրապարակվեն Շահումը հաղթելու դեպքում:** Այլ անձնական տվյալները կօգտագործվեն հարկային հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման նպատակներով ոչ պակաս 5 տարուց (ավել երկար, եթե դա պահանջվի օրենքով): |
| You will receive your Prize from Publicis Hepta’s offices, located in Yerevan, at 1/19, Northern Avenue. You will be additionally contacted and notified on the date and time you should visit Publicis Hepta’s office. | Դուք կստանաք Ձեր Շահումը Հյուսիսային պողոտա 1/19 հասցեում գտնվող Փաբլիսիս Հեպտայի գրասենյակում՝ ներկայացնելով Ձեր Վկայագիրը: Ձեզ հետ լրացուցիչ կկապվեն և կտեղեկացնեն Փաբլիսիս Հեպտայի գրասենյակ այցելության ամսաթվի և ժամի մասին: |
| Upon receipt of your prize at Publicis Hepta’s office, you will also be asked to sign a handover act with Publicis Hepta LLC, acting as the Campaign organizer. | Փաբլիսիս Հեպտայի գրասենյակում Ձեր շահումը ստանալիս Դուք պետք է նաև ստորագրեք հանձնման-ընդունման ակտը Փաբլիսիս Հեպտա ՍՊԸ-ի հետ, որը հանդես է գալիս որպես Արշավի կազմակերպիչ: |
| Upon receipt of your prize, you will also be provided with a guarantee letter issued by the seller. | Ձեր շահումը ստանալիս Ձեզ կտրամադրվի նաև վաճառողի կողմից տրված երաշխիքային կտրոն: |
| Hereby we notify you, that under Armenian Tax Code, the Prizes you receive will be subject to personal income tax which will be paid by | Սույնով տեղեկացնում ենք Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի համաձայն Շահումները հարկվում են |

| | |
|---|---|
| Publicis Hepta. Publicis Hepta will act as your tax agent and pay your income tax on your behalf directly to the Tax Authorities. Your passport details, including your personal details are collected and processed by Publicis Hepta for the purposes of fulfilling tax obligations under Armenian Tax Code. | եկամտային հարկով, որը կվճարվի Փաբլիսիս Հեպտայի կողմից: Փաբլիսիս Հեպտան հանդես կգա որպես Ձեր հարկային գործակալ և կվճարի Ձեր եկամտային հարկը Ձեր անունից անմիջապես հարկային մարմիններին: Ձեր անձնագրային տվյալները, ներառյալ Ձեր անձնական տվյալները, հավաքագրվում և մշակվում են Փաբլիսիս Հեպտայի կողմից Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի համաձայն հարկային պարտավորությունների կատարման նպատակով: |
| **4. Exceptions** | **4. <u>Բացառություններ</u>** |
| Transactions which do not meet the eligibility criteria do not participate in the Campaign. For avoidance of doubt, it is provided, that the following transactions will not be participating in the Campaign: | Մասնակցության պայմանները չբավարարող գործառնությունները չեն մասնակցում Արշավին: Տարընկալումներից խուսափելու համար սահմանվում է, որ հետևյալ տեսակի գործառնությունները չեն մասնակցի Արշավին՝ |
| a. Transactions made with a card other than Visa. | ա. Այն գործառնությունները, որոնք կատարվել են ոչ Վիզա քարտերով: |
| b. Transactions which refer to a purchase made outside the Campaign dates. | բ. Այն գործառնությունները, որոնք կատարվել են Արշավի օրերից դուրս: |
| c. Cash withdrawals. | գ. Կանխիկացումները: |
| d. Transactions, purchase amount of which is less than 5,000 AMD. | դ. Այն գործառնությունները, որոնց չափը չի գերազանցում 5,000 ՀՀ դրամը: |
| e. Transfer money from the card account to the account of another natural or legal person. | ե. Այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի հաշվին կատարված քարտային փոխանցումները: |
| f. Gambling-related transactions. | զ. Շահումով խաղերի հետ կապված գործառնությունները: |
| g. Any kind of illegal transactions. | է. Ցանկացած անօրինական գործառնությունները: |
| h. Transactions made by Bank employees and host. | ը. Բանկի աշխատակիցների կամ վարողի կողմից կատարված գործառնությունները: |
| i. Transactions made by individual under 18 years of age. | թ. 18 տարին չլրացած անձանց կողմից կատարված գործառնությունները: |
| j. Transactions made by non-resident persons. | <u>ժ. Ոչ ռեզիդենտ անձանց կողմից կատարված գործառնությունները:</u> |
| k. <u>Individuals who are prohibited from participating in raffles according to the legislation of the RA.</u> | <u>է. Անձինք, ում ՀՀ օրենսդրությամբ արգելվում է մասնակցել վիճակախաղերի:</u> |

| | |
|---|---|
| l. Transactions made before 00:00: 01:00 on December 15, 2021 (local time) and after 23:59:59 on January 10, 2022 (local time). | թ. 2021 թվականի դեկտեմբերի 15-ի (տեղական ժամանակով) 00:01:00-ից շուտ եւ 2022 թվականի հունվարի 10-ի (տեղական ժամանակով) 23:59:59-ից ուշ կատարված գործառնությունները: |
| m. Wallet top-ups, utility payments. | ժ. Դրամապանակների համալրումները, կումունալ ծառայությունների վճարումները: |
| n. P2P/C2C transactions | ի. Անձից՝ անձ, քարտից՝ քարտ գործառնությունները: |
| o. Transactions made by business cards of legal entities. | L=լ. Իրավաբանական անձանց պատկանող բիզնես քարտերով կատարված գործառնությունները: |
| **5. Responsibility** | **5. Պատասխանատվությունը** |
| We are not liable for any malfunction, breakage, unavailability, shortage, or any defect of any of the Prizes you receive during the Campaign. By agreeing to these Terms and Conditions you agree to relieve us from any type and form of liability related to the Campaign and handover of the Prizes. You will not be able to submit any claims to Publicis Hepta, as the Campaign organizer, or Visa which relates to your Prize. All questions and queries related to the Prizes shall be handled in accordance with the guarantee letters provided by the sellers. | Մենք պատասխանատվություն չենք կրում Արշավի շրջանակներում Ձեր կողմից ստացված Շահումների ցանկացած անսարքության, խնդիրների, կամ որևէ թերության դեպքում: Սույն Պայմաններին և Դրույթներին համաձայնելով, Դուք համաձայնում եք ազատել մեզ Արշավի և Շահումների հանձնման հետ կապված ցանկացած տեսակի և ձևով պատասխանատվությունից: Դուք չեք կարող Ձեր շահումին վերաբերող որևէ պահանջ ներկայացնել Փաբլիսիս Հեպտային՝ որպես Արշավի կազմակերպչին, կամ Վիզային: Շահումների հետ կապված բոլոր հարցերն ու հարցումները պետք է լուծվեն վաճառողների կողմից տրամադրված երաշխիքային կտրոնների համապատասխան: |
| **6. Personal data processing consent** | **6. Անձնական տվյալների մշակման համաձայնություն** |
| You are hereby notified, that for the purposes of fulfilling our reporting obligations, as well as tax filing obligations under Armenian Tax Code, you will be required to provide us with certain personal information during your participation in the Campaign. By agreeing to these Terms and Conditions you explicitly provide us with your consent to process your personal data as provided under this clause 6, thus the legal basis for the processing of your personal data will be your informed consent: | Դուք սույնով ծանուցվում եք այն մասին, որ մեր հաշվետվողական պարտավորությունների կատարման, ինչպես նաև ՀՀ Հարկային օրենսգրքին համապատասխան հարկային հաշվառում և հարկային հաշվետվություններ ներկայացնելու պարտավորության կատարման նպատակով Արշավին Ձեր մասնակցության ժամանակ Ձեզանից կարող է պահանջվել մեզ տրամադրել որոշ անձնական տվյալներ: Համաձայնելով սույն Պայմաններին և Դրույթներին՝ Դուք ուղղակիորեն մեզ տալիս |

| | |
|---|---|
| | եք Ձեր անձնական տվյալները մշակելու համաձայնություն, ինչպես նախատեսված է սույն կետ 6-ում․ հետևապես, Ձեր անձնական տվյալների մշակման իրավական հիմքն է հանդիսանում Ձեր գրավոր համաձայնությունը: |
| a. <u>Type of personal data collected:</u><br>You will be required to provide us your name, surname, telephone number, signature as well as your passport or ID card details, social security number, residence address, which are collectively referred to as "Personal Data". | <u>ա․ Հավաքագրվող անձնական տվյալների տեսակը</u><br>Ձեզանից կպահանջվի մեզ տրամադրել Ձեր անունը, ազգանունը, հեռախոսահամարը, ստորագրությունը, ինչպես նաև Ձեր անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալները, սոցիալական քարտի համարը, բնակության հասցեն, որոնք այսուհետ միասին՝ «Անձնական տվյալներ»: |
| b. <u>Actions performed with Personal Data:</u><br>Based on your consent your Personal Data may be collected, stored, corrected, organized, used, transferred, restored or destroyed, which is collectively referred to as "Processing", as per law of the Republic of Armenia on Personal Data Protection. You explicitly agree that your Personal Data may be transferred to the third parties located in and outside of the Republic of Armenia, including without limitations, to tax authorities of the Republic of Armenia for Income Tax filing purposes, to Visa and all its subsidiaries and group companies for the purposes of reporting the outcome of the Campaign, to any sub-contractor or agency involved in the Campaign, to any group company of Publicis Hepta for reporting purposes. | <u>բ․ Անձնական տվյալների հետ կատարվող գործողությունները․</u><br>Ձեր համաձայնության հիման վրա Ձեր անձնական տվյալները կարող են հավաքագրվել, պահպանվել, ուղղվել, համակարգվել, օգտագործվել, փոխանցվել, վերականգնվել կամ ոչնչացվել, բոլորը միասին այսուհետ՝ «Մշակում»՝ համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի: Դուք ուղղակիորեն համաձայնվում եք, որ Ձեր Անձնական տվյալները կարող են փոխանցվել երրորդ անձանց, որոնք գտնվում են Հայաստանի Հանրապետությունում և դրա սահմաններից դուրս, այդ թվում՝ առանց սահմանափակման, Հայաստանի Հանրապետության հարկային մարմիններին՝ եկամտային հարկի հաշվարկման և վճարման համար, Վիզաին և նրա բոլոր դուստր ընկերություններին և խմբի ընկերություններին՝ արշավի արդյունքների մասին հաշվետվություն ներկայացնելու նպատակներով, ցանկացած ենթակապալառուի կամ արշավին մասնակցող |

| | |
|---|---|
| | գործակալության, Փաբլիսիս Հեպտա խմբի ցանկացած ընկերության՝ հաշվետվողականության պարտավորություններն ապահովելու նպատակով: |
| c. **<u>Withdrawal of your consent:</u>** You may withdraw your consent to Processing of Personal Data at any time by contacting Publicis Hepta at visa_promotion@publicis.am and submitting a written request. We undertake to cease the Processing and delete your Personal Data unless we are required to archive and retain it under any legal obligation. | **<u>գ. Համաձայնության հետկանչը.</u>**<br>Դուք կարող եք հետ կանչել Ձեր Անձնական տվյալների մշակման համաձայնությունը ցանկացած ժամանակ, կապվելով Փաբլիսիս Հեպտայի հետ՝ հետևյալ հասցեով visa_promotion@publicis.am և ուղարկելով գրավոր պահանջ: Մենք պարտավորվում ենք դադարեցնել Ձեր Անձնական տվյալների Մշակումը և ոչնչացնել դրանք, եթե մեզանից չի պահանջվում, որ դրանք արխիվացվեն և պահվեն համաձայն որևէ իրավական պարտավորության: |
| d. **<u>Term of your consent:</u>** Your consent is valid for a period of 10 years and is deemed to be provided upon your participation in the Campaign unless you revoke it earlier. | **<u>դ. Համաձայնության ժամկետը.</u>**<br>Ձեր համաձայնությունը համարվում է տրամադրված Արշավին ձեր մասնակցության պահից և գործում է 10 տարի ժամկետով, եթե ավելի վաղ հետ չկանչվի: |
| e. **<u>Rights:</u>** You enjoy all the rights and bear all the obligations of the data subject prescribed under the law of the Republic of Armenia on “Personal Data Protection”.<br>Participation in the raffle is automatic, but agreeing to be a winner (and therefore to being announced as a winner) is voluntary.<br>Your personal information: name, surname, e-mail and telephone number, will be used only for the purpose of the raffle. | **<u>ե. Իրավունքները.</u>**<br>Դուք օգտվում եք բոլոր իրավունքներից և կրում եք բոլոր պարտականությունները, որոնք տվյալների սուբյեկտի համար նախատեսված են Հայաստանի Հանրապետության «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով:<br>Վիճակախաղին Ձեր մասնակցությունը կրում է ինքնաշխատ բնույթ, սակայ հաղթող համարվելուն համաձայնվելը (և որպես հետևանք որպես հաղթող հայտարարվելուն համաձայնվելը) կրում է կամավոր բնույթ: Ձեր անձնական տվյալները՝ անունը, ազգանունը, էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը |

| | |
|---|---|
| | կօգտագործվեն միայն վիճակախաղի նպատակով։ |